



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՀԱՅ ԱՐԵՏ. Շ. ԵՒ Է. ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 25-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ ՅԱՆՁՆԵՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ԾՈՐՃ ՖԻԼԻՓՍԻ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Կիրակի, 4 Փետրուարի երեկոյեան ներկայ եղաւ Հայ Աւետ. Շարլոթ եւ Էլիզ Մերտինեան վարժարանի 25-ամեակի տօնակատարութեան եւ այս առիթով, Վարժարանի հիմնադիրներէն ու երախտաւորներէն Տիար Ճորճ Ֆիլիփսի յանձնեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Օրհնութեան Գիրը:

Տօնակատարութիւնը տեղի ունեցաւ «Արարատ» Տան Տօքսէճեան սրահին մէջ: Առաջնորդ Սրբազանը, ընդառաջելով իրեն ուղղուած հրաւերին, ներկայ եղաւ հանդիսութեան, արտայայտեց իր շնորհաւորութիւններն ու բարգաւաճում մաղթեց վարժարանին: Ան օրհնեց վաստակը վարժարանի հիմնադիրներուն, նշելով, որ անոնք ճամբայ ելած էին ամերիկեան այս արեւմտեան Աստուծոյ խօսքն ու հայրութեան աւանդները հայ նորահաս սերունդներուն փոխանցելու մտասուեռումով, քաջ գիտակցելով, որ «կրթէ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որպէսզի երբ ծերանայ, անկէ չխտորի» Աստուծոյ պատուիրանը անժամանցելի է: Ան վեր առաւ այս վարժարանին այն արժանիքը, որ կը կայանայ Աստուածաշունչը իբրեւ ուղեցոյց ճանչնալու անոր կոչումին մէջ:

25-ամեակի տօնակատարութեան առիթով, վարժարանին տնօրէնութիւնն ու հոգաբարձու մարմինները ազնիւ գաղափարը ունեցած էին իբրեւ Տարուան Մարդը պատուելու ուսումնարանի հիմնադիր սերունդի անդամներէն եւ երախտաւորներէն Տիար Ճորճ Ֆիլիփսը եւ Առաջնորդ Սրբազան Հօր դիմելով, խնդրամատոյց եղած էին Վեհափառ Հայրապետին, որ ըստ արժանւոյն պատուէ գայն: Նորին Սրբութիւնը բազմաշխատ ծառայողին շնորհած էր յատուկ Գիր մը, զոր հանդիսաւոր կերպով անոր յանձնեց Առաջնորդ Սրբազանը:

Վեհափառ Հայրապետը կ'ողջունէ վարժարանին հոգաբարձու խորհուրդին նախաձեռնութիւնը եւ կ'ընդգծէ թէ «ճշմարիտ ծառայութիւնը կ'անդրանցնի դաւանական թէ համայնքային, կրօնական թէ աշխարհագրական սահմանները: Հաւատքով ու նուիրումով զսպանակուած ծառայութիւնը կը դառնայ սիրելի ու գնահատելի բոլորին համար, եւ մարդերէն առաջ ու վեր՝ Աստուծոյ համար»: Ան կ'աւելցնէ, թէ Տիար Ֆիլիփսի ծառայութիւնները չեն սահմանափակուած միայն

Մերտիևեան վարժարանի ծիրին մեջ, այլ կը տարածուին Քալիֆորնիոյ հայկական ու ամերիկեան բազմաթիւ հաստատութիւններու վրայ, ընդգրկելով ազգային-կրօնական, կրթական-մշակութային եւ ընկերային-բարեսիրական կալուածները:

Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, շնորհաւորեց մեծարեալը ու անոր մաղթեց քաջառողջութիւն եւ ծառայական իր վաստակը աւելի եւս հարստացնելու առիթներ:

## ON THE 25<sup>TH</sup> ANNIVERSARY OF CHARLOTTE & ELISE MERDINIAN ARMENIAN EVANGELICAL SCHOOL

### **PRELATE PRESENTS SCHOOL FOUNDER GEORGE PHILLIPS WITH A LETTER OF BLESSING FROM HIS HOLINESS**

On Sunday, February 4<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, attended the 25<sup>th</sup> anniversary celebration of Charlotte & Elise Merdinian Armenian Evangelical School where he presented one of the founders of the school, Mr. George Phillips, with a letter of blessing from H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia.

At the reception, which took place at “Ararat Home” in Mission Hills, the Prelate conveyed his congratulatory remarks and wished the school success. He also commended the vision of the founders, who embarked on their mission with the aim of imparting God’s Word and our Armenian traditions to the new generation of Armenian youth growing up in an American environment.

On the occasion of the 25<sup>th</sup> anniversary of the school, the principal and board members had decided to honor Mr. George Phillips, one of the founders and devoted servant of the school, as Man of the Year, and had requested from the Prelate the blessing of His Holiness. Upon this request, H.H. Aram I sent a letter of blessing to Mr. George Phillips which the Prelate presented to Mr. Phillips at the reception.

In His letter, His Holiness saluted the school Board for their expression of gratitude in regards to Mr. Phillips’ service, adding that true service surpasses professional, community, religious, and geographical boundaries, and that service that arises from faith and devotion is appreciated by all and especially in the eyes of God. His Holiness also noted that Mr. Phillips’ service has exceeded the borders of Charlotte & Elise Merdinian Armenian Evangelical School, reaching a wide range of Armenian and American establishments throughout California including various national-religious, educational-cultural, and social-benevolent institutions.

The Prelate then conveyed his own remarks and wished Mr. Phillips health and prosperity.